

ՎԱՐԻՆԻ ՆԱՅԱՆՔԻ ԽՆՈՒՄԻ ՉԱՎԱՌԱԿԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ

3. Չ. ԶԱՏԻԿՑԱՆ

19-րդ դարի երկրորդ կեսին գնալով խորանում էին Թուրքիայի տնտեսական քայքայման ու քաղաքական մասնատման երևույթները: Դրանք ավելի քան պարզորոշ ընդգծվեցին 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: Սուլթանական վարչակարգը, գործադրության ընդունելով օսմանիզմի ծրագիրը, ձգտում էր հալածանքների, կրոնափոխության, կոտորածների ճանապարհով լուծել հպատակների ձուլման քաղաքականությունը:

Այս պայմաններում արևմտահայությունը իր վրա էր ընդունում զուլումի քաղաքականության ծանր հարվածները: Բարձր դուռը օգտագործում էր բոլոր միջոցները՝ Արևմտյան Հայաստանը հայաթափելու պետական ծրագիրը իրագործելու համար: Որպես հետևանք այդ դաժան քաղաքականության՝ Կարինի նահանգում ևս տեղի էին ունենում ժողովրդագրության տեղաշարժեր. անվանափոխվում էին բնակավայրերը, կեղծվում էր բնակչության իրական քանակը, տարածվում էր այն ստահող տեսակետը, թե հայերը կազմում են Արևմտյան Հայաստանի բնակչության չնչին տոկոսը: Սուլթանական վարչակարգը այդ ճանապարհով ցանկանում էր կոծկել իր ոճրագործությունները, հայության ուծացման հանցագործ գործելակերպը:

Ուսումնասիրելով Կարինի նահանգի նշված ժամանակահատվածի պատմությունը՝ նպատակ ենք ունեցել բացահայտել թուրքական «վիճակագրության» կողմնակալ դրսևորումները, հնարավորության սահմաններում ներկայացնել իրական պատկերը:

Կարինի նահանգի Խճուսի գավառակը զբաղեցնում է պատմական Հայաստանի Խճուս, Հարթ, Վարածուհիք գավառների տարածքը՝ ընդգրկելով Խճուսի գոգավորությունը Բյուրակնյա լեռների հետ միասին:

Մ. թ. ա. 2-րդ դարում Արտաշես Ա թագավորը Մեծ Հայքին միացրեց Բարձր Հայքի արևելյան, Տիգրան Մեծը՝ արևմտյան շրջանները, և Խճուսը դարձավ Մեծ Հայքի գավառներից մեկը:

Այս վիճակը պահպանվեց նաև Արշակունիների թագավորության ժամանակ: Հայաստանի առաջին բաժանումից հետո Բարձր Հայքը միացվեց Հռոմեական կայսրությանը: 7-րդ դարում Խճուսի գավառակը ենթարկվեց արաբական ասպատակություններից: 8-րդ դարում գավառակը ընկավ Կայսիկների էմիրության, 12-րդ դարում՝ Օսմանյանների, 13-րդ դարում՝ մոնղոլների, 14-րդ դարում՝ Լենկթեմուրի, 15-րդ դարում՝ կարակոյունլուների, ակկոյունլուների տիրապետության տակ: 1639 թ. Դիարբեքերի պայմանագրով գավառակը անցավ Թուրքիայի տիրապետության տակ և 18-րդ դարում դարձավ Բայազետի փաշայության գավառներից մեկը: 19-րդ դարի 60-ական թթ. վարչական բաժանումից հետո ընդգրկվեց Կարինի նահանգի կազմում: 1877-1878 թթ. Խճուսի գավառակը մտնում էր նորակազմ Էրզրումի մարզի մեջ:

Գավառակը ունի հարուստ բնություն, բերրի դաշտեր: Բնության հրաշալիք է ստորգետնյա գետը, որն անվանվում է «Խճուսի նեղուս»: Այն երկրի երես է դուրս գալիս Խըրըթ գյուղի մոտակայքում և հասնելով Քառասուն Մանուկ ուխտատեղի՝ բաժանվում է գետակների, առուների և ոռոգում գավառակի դաշտերն ու այգեստանները:

Բյուրակնյա լեռների 3280 մ բարձրություն ունեցող գագաթից սկիզբ է առնում Արածանի աջակողմյան վտակ Խճուս գետը, որն ունի 127 կմ երկարություն: Գավառակի

ամենարգավանդ մասը խնուսի դաշտն է: Դաշտը բոլոր կողմերից շրջապատված է խամուր, բյուրակնյա, Ծաղկունյաց լեռներով և մուտք ունի միայն հարավարևելյան կողմից, որտեղից էլ դուրս է գալիս արագաձու խնուս գետը: Դաշտի լայնությունը 15 կմ է, երկարությունը՝ 30 կմ: Գավառակի արևմտյան կողմում գտնվող բյուրակնյա լեռներից են սկիզբ առնում Երասխա և Արածանի գետերը: Նրանց ակունքների մոտ, համաձայն ավանդության, տեղավորված էր դրախտը: Ադամն ու Եվան իբր ապրել են բյուրակնյա լեռների արևելյան լանջերին գտնվող Սելի Մուրուք բլրի գագաթին՝ սառնորակ աղբյուրների ակունքների մոտ, Հարամիկ գյուղի մոտակայքում: Գյուղից հարավ Կայեմի բլուրն է: Ըստ ավանդության, այդ բլրի վրա է կանգնած եղել Կայեմը, երբ նրան նետահարել է որսորդ Ղամեբը:

Գավառակի նշանավոր պատմական վայրերից են խնուսի բերդը, Մծնկերտի ս. Կարապետ, Թուխ Մանուկ, Մասուր Նորելածին վանքերը:

Գավառակը հայտնի էր քարածխի, պղնձի, արծաթի, շինանքարի հանքերով: Համբավավոր էին խնուսի պանիրը, «նախշ է ֆարո» անունով, չխամրող զույներով գորգերը:

Բարձր Հայքի Կարինի նահանգի պատմությանը, սոցիալ-տնտեսական, քաղաքական հարաբերություններին անդրադարձել են հայ և օտարագի մի շարք ուսումնասիրողներ, ճանապարհորդներ, զինվորական գործիչներ, հուշագիրներ: Դրանցից ամենաառաջինը Կարինի ս. Աստվածածին եկեղեցու քահանա Հակոբ Կարնեցին է¹: Նրա աշխատությունները պարունակում են ժամանակագրական, ժողովրդագրական, աշխարհագրական կարևոր տեղեկություններ և ստանում են սկզբնաղբյուրի արժեք: Ղ. Ինճիճյանը, Ղևոնդ Ալիշանը, Ա.-Դոն, Մ. Միրախորյանը, Ս. Մոցիկյանը, Ղ. Զարրզը, Լ. Զորմիսյանը, Գ. Սրվանձախյանը, Հ. Տաշչյանը, Ե. Մելիքյանը, Հ. Քոսյանը իրենց ուսումնասիրություններով, հուշագրություններով ընդարձակ տեղեկություններ են հաղորդում գավառակի մասին: Սակայն նշված հեղինակներից քչերն են անդրադարձել մեզ հետաքրքրող խնդիրներին և հաճախ կրկնելով իրար՝ նոր եզրակացություններ, վկայություններ չեն հաղորդում հատկապես ժողովրդագրական բնույթի փաստերի վերաբերյալ:

Գավառակի ժողովրդագրության հիմնահարցի մշակման ընթացքում օգտագործել ենք մեծաքանակ արխիվային փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տվել նշգրտելու գավառակի հայության քանակը, բացահայտել թուրքական վիճակագրության ու դրանք կրկնողների կեղծիքները²:

Գավառակի բնակչության քանակի, ազգային կազմի մասին կան հակասական տեղեկություններ: Ա. Կոլլուբակինի տեղեկություններով 19-րդ դարի երկրորդ կեսին գավառակն ունեցել է 46 գյուղ՝ 1688 տուն բնակչությամբ, որոնցից 955 հայկական էին³: Գավառակում, հավաստում է մեկ այլ հեղինակ. 1880 թ. կար 171 գյուղ, որից հայաբնակ էին 11-ը, թուրքաբնակ՝ 2-ը, 139՝ քրդաբնակ, իսկ 19-ը ուներ խառը բնակչություն: Բնակչությունը կազմում էր 22518 մարդ, որից քրդեր՝ 13362, հայեր՝ 8552, թուրքեր 584⁴: Հ. Էփրիկյանի հաշվումներով գավառակի գյուղերում կար 1293 տուն հայ բնակչություն, որոնք ապրում էին 38 գյուղերում⁵: Ա.-Դոյի կամ Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ գավառակի 32 գյուղերում կար 1860 տուն՝ 13020 շունչ հայեր⁶: Ե. Մելիքյանը հայտնում է, որ 1914 թ. պատերազմից առաջ գավառակում կար 35-38 հայաբնակ գյուղ, որտեղ ապրում էին 25000 հայեր⁷: Մ. Միրախորյանի վիճակագրությամբ գավառակում

¹ Տե՛ս Հակոբ Կարնեցի, Օհնուած Կարնոյ քաղաքին, տե՛ս Վ. Հակոբյանի կազմած «Մանր ժամանակագրություններ. 13-18-րդ դդ.», հ. 2, Եր., 1956, «Տեղեկագիր Վերին Հայոց», Վաղարշապատ, 1903:

² Տե՛ս ՀՀԳԿԳԱ, ֆ. 476, 57, ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, գ. 47, 23:

³ Տե՛ս А. М. Коллюбакин, Матерьялы для описания Персии, Азиатской Турции и Закаспийского края, Тифлис, 1888, էջ 124:

⁴ Տե՛ս «Փորձ», 1880, թիվ 6-7, էջ 221:

⁵ Տե՛ս Ա.-Դո , Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Եր., 1912, էջ 236-237:

⁶ Տե՛ս ՀՀԳԿԳԱ, ֆ. 476, ց. 1, գ. 695, թ. 21:

⁷ Տե՛ս Ե. Մելիքյան, Հարք-խնուս, Բեյրութ, 1957, էջ 10-15:

կար 1427 տուն հայ բնակչություն⁶: Մեկ ուրիշ փհնակագիր տեղեկացնում է, որ գավառակում ապրում էր 2172 տուն հայ բնակչություն⁷: Արխիվային փաստաթղթերից մեկը հայկական գյուղերի քանակը ընդունում է 19-ը, տների քանակը՝ 1065, բնակչությունը՝ 12202 շունչ⁸: Իրարամերձ այս վկայություններից միջին հաշվով ունենում ենք 31 գյուղ՝ 1800-1900 տուն հայ բնակչությամբ: Կամ՝ հայերի թիվը հասնում էր 18-19000-ի:

Այժմ մեզ հայտնի ցուցակների համադրմամբ պարզենք գյուղերի քանակը:

Համեմատություններից երևում է, որ 30 գյուղ ոչ բոլոր ցուցակներում են հիշատակվում: Տարբեր աղբյուրներից մեր հավաքած գյուղերից 7-ը նույնպես տեղ չեն գտել ցուցակներում: Պարզվում է, որ գավառակն ունեցել է 70 գյուղ (համեմատությունները կատարվել են Ա.-Դոյի, ՀԱՀ 5-րդ հատորի, ՏԲ 2-րդ հատորի և մեր հավաքած արխիվային փաստաթղթերի միջև):

Գավառակի տարածքը կազմում էր 500000 քառ. մղոն և բաժանվում էր 5 շրջանների՝ 1. Խնուս-Հարք, 2. Օուշար-Վարածնունքի, 3. Թագման (Թարգման), Մանանդի (Մարդադի), 4. Խարայազի-Դասնավորքի, 5. Կեռքու-Տվարածատափի:

Գավառակի Ջենրեն, Հարամիկ, Խոզլու, Ենիքոյ, Բուրնազ գյուղերում ապրում էին բողոքական հայեր: Նրանց նախնիները գաղթել էին Բիթլիսից: Նրանց թիվը հասնում էր 500-600-ի⁹: Լուսավորչական հայերը 10221 շունչ էին¹⁰:

Գավառակի ամենամեծ գյուղը Քարագորթանն էր (Ղարաչոպան, Քարաչոպան, Կարաչոպան): Կարինի առաջնորդարանի փհնակագրությամբ գյուղն ունեցել է 220 տուն հայ բնակչություն, 1895 թ.՝ 170 տուն հայ բնակչություն¹¹, իսկ 1894-1896 թթ. կոտորածներից մնացել են 70 տուն հայեր¹²: Գյուղը ուներ երեք թաղ, գործող եկեղեցի կրում էր ս. Հակոբ անունը: Եկեղեցին երեք խորանանի էր, վեց սյուների վրա կառուցված, ուներ երկու զանգակատուն: Հնագիտական արժեք էր ներկայացնում գերեզմանոցը:

Բնակչության թվաքանակի մասին ունենք հետևյալ տեղեկությունները. Մ. Միրախորյանը 1885 թ. գյուղում հաշվում էր 150¹³, Հ. Էփրիկյանը՝ 1903 թ. 136 տուն հայ բնակչություն¹⁴: Միջին հաշվով կունենանք 143 տուն՝ 1001 շունչ հայ բնակչությամբ (հաշվարկը կատարված է տունը 7 անձ սկզբունքով): Նախորդ երկու վկայությունները ներառյալ՝ միջին հաշվով կունենանք 169 տուն, 1184 շունչ հայ բնակչություն:

Ջենրեն գյուղը ջրառատ, բերրի դաշտերով գյուղ էր: Բնակչությունը, բացի երկրագործությունից և անասնապահությունից, զբաղվում էր նաև արհեստներով և առևտրով: Գյուղում գործում էին եկեղեցի և վարժարան: Համիդյան կոտորածների ժամանակ գյուղը կրեց մարդկային և նյութական մեծ վնասներ:

1885 թ. գյուղն ունեցել է 65 տուն, 1903 թ.՝ 57 տուն¹⁵, Կարինի առաջնորդարանի տվյալներով՝ 150 տուն հայ բնակչություն¹⁶: Մեկ այլ աղբյուր հայտնում է, որ 1885 թ. գյուղն ունեցել է 115 տուն, 1914 թ. առաջ՝ 180 տուն հայ բնակչություն¹⁷:

Միջին հաշվումներով կունենանք՝ 113 տուն, 814 շունչ հայ բնակչություն:

Գյուղում տարածված արհեստներից էին գորգագործությունն ու ջուլհակությունը: Գործում էին եկեղեցին և Մեսրոպյան վարժարանը:

Հարամիկ - Հարամեկ գյուղը գտնվում էր Արածանիի վտակ Խնուս գետի ձախ ափին: Անվանումը ծագել է Հայկ նահապետի Հարամա որդու անունից: Ավանդության

⁶ Տե՛ս ՀՀՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 695, թ. 21:

⁷ Տե՛ս նույն տեղը:

⁸ Տե՛ս նույն տեղը, թ. 23:

⁹ Տե՛ս նույն տեղը, գ. 696, թ. 5:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, թ. 5:

¹¹ Տե՛ս Ա.-Դո. նշվ. գիրքը, էջ 185:

¹² Տե՛ս ՀՀՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 242, թ. 26:

¹³ Տե՛ս Մ. Միրախորյան, Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ Գառուս Արևելյան Տանկաստանի, Բ. Ա., մ. 3, Պոլիս, 1885, էջ 160:

¹⁴ Տե՛ս Հ. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ քառարան, պր. 1, Վենետիկ, 1900, էջ 52:

¹⁵ Տե՛ս ՀՀՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 242, թ. 26:

¹⁶ Տե՛ս Ա.-Դո. նշվ. գիրքը, էջ 185:

¹⁷ Տե՛ս ՀՀՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 695, թ. 21:

համաձայն, գյուղից ոչ հեռու գտնվում է մի սառնորակ աղբյուր, որի ակունքի մոտ էր գտնվում Ադամի որդի Աբելի գերեզմանը:

Հարամեկցիները, բացի երկրագործությունից և անասնապահությունից, զբաղվում էին նաև խեցեգործությամբ: Գյուղի մոտակայքում գտնվող դեղնավուն կավից խեցեգործները պատրաստում էին տնային գործածության իրեր, որոնք մեծ պահանջարկ ունեին: Գյուղում գործում էին լուսավորչական և բողոքական եկեղեցիները, երկու վարժարան:

1885 թ. գյուղն ունեցել է 93 տուն, 1903 թ.¹ 112, 1914 թ. պատերազմից առաջ՝ 150 տուն հայ բնակչություն²: Մեկ այլ արխիվային փաստաթուղթ հայտնում է, որ գյուղն ունեցել է 112 տուն, 914 շունչ հայ բնակչություն³:

Միջին հաշվարկով կունենանք 92 տուն, 887 շունչ հայ բնակչություն:

Գովաճղուկ (Գեյվաճղուկ, Գովաճուխք, Գովաճուղուկ, Կովաճղիք) գյուղը տեղավորված էր Արածանիի վտակ Խճուս գետի ափին: Բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, քարագործությամբ: Գյուղի մոտ գտնվող քարահանքից քարագործները պատրաստում էին ձիթահանքի, ջրաղացի, աղորիքի քարեր, որոնք սպառվում էին նաև հարևան գավառներում: Խամլու ձորի արևմտյան կողմում էր գտնվում գեղատեսիլ Եղեզնաձորը, նրա հարևանությամբ զույալ ու վճիտ Աղո լիճն էր: Գյուղին մեծ համբավ էին բերում ազնվացեղ ձիերը, որոնք մեծ պահանջարկ ունեին նաև հարևան գավառներում: Գյուղի մոտակայքում կար աղահանք, որը քաղաքական նկատառումներով 1892 թ. դադարեց գործելուց⁴:

Գովաճղուկը հայտնի էր իր բուժիչ ջրերով, որոնք ապաքինում էին հատկապես նյարդային հիվանդներին: Գյուղն ուներ ս. Գևորգ անունով եկեղեցի, ս. Լուսավորչի աճվամբ վարժարան:

Բնակչության քանակի վերաբերյալ ունենք հետևյալ տեղեկությունները. Մ. Միրախորյանը հայտնում է 90 տուն⁵, Հ. Էփրիկյանը՝ 80⁶, Ա. Դոն՝ 120 տուն հայ բնակչություն⁷: Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է 80 տուն, 1003 շունչ հայ բնակչության մասին⁸, երկրորդը՝ 54 տուն, 151 տղամարդ, 141 կին հարաբերությամբ հայ բնակչության մասին⁹: Միջին հաշվարկով կունենանք 85 տուն, 682 շունչ հայ բնակչություն:

Քաղքին գյուղը գավառակի բարեկեցիկ, բարեկարգ, արգավանդ դաշտերով գյուղերից էր: Մ. Միրախորյանի տեղեկություններով գյուղն ուներ 43 տուն, Հ. Էփրիկյանի՝ 45 տուն, Ա. Դոնի՝ 120 տուն հայ բնակչություն¹⁰: Միջին հաշվարկով կունենանք՝ 69 տուն, 485 շունչ հայ բնակչություն:

Արոս գյուղը գտնվում էր Խճուս գետի աջ ափին: Գավառակի՝ արհեստագործությամբ աչքի ընկնող գյուղերից էր: Գյուղի մոտ գտնվող քարահանքի բարձրորակ քարերից քարագործ վարպետները պատրաստում էին եկեղեցիների, կամուրջների կամարներ, փոերի քարեր: Գյուղում տարածված արհեստներից էին նաև ջուլհակությունն ու որմնադրությունը: Գյուղը անունն ստացել է իր հատակագծի պատճառով, որն ուներ արոս թռչունի ձև: Քանի որ գյուղը գտնվում էր Մուշ տանող առևտրական ճանապարհի վրա, գործում էին նաև առևտրականները:

Ուսումնասիրողներից մեկը հայտնում է, որ 18-19-րդ դարերում գյուղն ունեցել է 250-300 տուն բնակչություն¹¹: Արխիվային փաստաթղթերից մեկի հաղորդմամբ գյուղն

¹ Տե՛ս նույն տեղը, թ. 22:

² Տե՛ս նույն տեղը:

³ Տե՛ս նույն տեղը, գ. 233, թ. 117:

⁴ Տե՛ս Մ. Միրախորյան, նշվ. գիրքը, էջ 160:

⁵ Տե՛ս Հ. Էփրիկյան, նշվ. հատորը, էջ 52:

⁶ Տե՛ս Ա. Դոն, նշվ. գիրքը, էջ 185:

⁷ Տե՛ս ՀՀՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 233, թ. 112:

⁸ Տե՛ս նույն տեղը, թ. 23:

⁹ Տե՛ս նույն տեղը:

¹⁰ Տե՛ս ՏՐ, հ. 1, եր., 1986, էջ 479:

ունեցել է 48 տուն, 611 շունչ հայ բնակչություն³⁰։ Մ. Միրախորյանն ընդունում է 36, Հ. Էփրիկյանը՝ 45³¹, Ա.-Դոն՝ 95 տուն հայ բնակչության գոյությունը³²։

Միջին հաշվարկով կունենանք 56 տուն, 392 շունչ հայ բնակչություն։

Խոզլի գյուղը գտնվում էր Սպիտակ կամ Դեղթաղ լեռան զանոթափի վրա՝ Խնուսի աջ վտակի ափին։ Գյուղը հայտնի էր նաև Գըզ-Ալի, Խոզ Ալի, Խոզլի, Խոզլու, Կոզլի, Քոզլի անուններով։ Մոտակա անտառից, վկայում է ավանդությունը, հաճախակի գյուղ էին լցվում վայրի խոզերը, որից էլ առաջացել է գյուղի անունը։ Արևիվային փաստաթղթերից մեկը վկայում է, որ գյուղում ապրում էին 14 տուն հայեր (48 տղամարդ, 36 կին)։ Հաջորդ փաստաթուղթը հայտնում է 77 տուն բնակչության մասին, որից 247-ը՝ տղամարդ, 222-ը՝ կին, երրորդ փաստաթղթի հավաստիացմամբ գյուղն ուներ 84 տուն, 1039 շունչ հայ բնակչություն³³։ Ա.-Դոն հաշվում է 120 տուն³⁴, հեղինակներից մեկը՝ 200 տուն բնակչություն³⁵։ Միջին հաշվարկով կունենանք 99 տուն, 788 շունչ հայ բնակչություն։

Ելփիս (Ելպիս, Էլբիս, Էլփի) գյուղը գտնվում էր Արածանիի աջ ափին՝ ձորաբովտի մեջ, Խնուսի բերդից 6 կմ հեռավորության վրա։ Գյուղից 1,5 ժամվա հեռավորության վրա էր գտնվում Շառաղենս անունով հարթավայրը, որը հեռվից երևում էր ճերմակ, ու թվում էր, թե «սպիտակ սաւանով մը ծածկուած ըլլալու է այդ տեղը, մինչդեռ աղի հողն է, որ այդ երևոյթը կպարզէ», - գրում էր հեղինակներից մեկը³⁶։ Երևացողը հանրահայտ աղի հանքն էր, որը մեծ եկամուտ էր բերում գյուղի բնակչությանը։

19-րդ դարի երկրորդ կեսին, ինչպես գավառակի գյուղերից շատերը, Ելփիսը ևս ընկավ քուրդ աղայի տիրապետության տակ։

Վիճակագիրները գյուղի բնակչության մասին հայտնում են հակասական տեղեկություններ՝ նշելով 50-75 տուն հայ բնակչության գոյության փաստը³⁷։ Միջին հաշվարկով կունենանք՝ 62 տուն, 280 շունչ հայ բնակչություն։

Ենիքեոյ գյուղը գտնվում էր Խնուս քաղաքից 17 կմ արևելք՝ Սպիտակ սարի գեղատեսիլ լանջին։ Գյուղի մոտ էր գտնվում Թուխ Մանուկ վանքը։ Երկարատև պայքարից հետո գյուղն ընդունեց քուրդ բեկի «հովանավորությունը»։

Գյուղը ուներ գործող եկեղեցի և Դիմաքսյան անունով վարժարան։

Բնակչությունը 30 տուն էր, 374 շունչ, վստահեցնում է հեղինակներից մեկը³⁸։ Մեկ այլ աղբյուր գյուղում հաշվում է 25 տուն հայ բնակչություն³⁹, Ա.-Դոն՝ 50 տուն հայ բնակչություն⁴⁰։ Միջին հաշվարկով կունենանք՝ 35 տուն, 299 շունչ հայ բնակչություն։

Շաբադին գյուղը գտնվում էր Խնուս գետի հարթավայրում։ Ուներ արգավանդ դաշտեր։ Բացի հացահատիկային կուլտուրաներից, մշակվում էին նաև այլ մշակաբույսեր։ Գյուղի երիտասարդությունը աչքի էր ընկնում հայրենասիրությամբ։ Նրանց ջանքերով էր, որ Մուրադի, Սերոբ Աղբյուրի, Անդրանիկի խմբերը ապահով հանգիստ էին առնում գյուղում, լրացնում պարենի պաշարն ու համարելով շարքերը՝ հեռանում։

Գյուղի ս. Գևորգ եկեղեցին գործող էր։ Գետի գեղատեսիլ ափին էր կառուցված վարժարանը։

Տուման գյուղը տեղավորված էր Զեռնակա լեռան լանջին։ Գյուղը մինչև 19-րդ դարի 70-ական թվականները համառ ու անզիջում պայքար էր մղում քրդերի դեմ։ Սակայն քուրդ հրոսակներին հաջողվում է կտրել հայերի դիմադրությունը, և արդեն 1885

³⁰ Տե՛ս ԸՀՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 695, թ. 23։

³¹ Տե՛ս նույն տեղը, թ. 21։

³² Տե՛ս Ա.-Դո, նշվ. գիրքը, էջ 185։

³³ Տե՛ս ԸՀՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 682, թ. 25։

³⁴ Տե՛ս Ա.-Դո, նշվ. գիրքը, էջ 185։

³⁵ Տե՛ս ՏԲ, հ. 1, էջ 761։

³⁶ Տե՛ս ԸՀՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 274, թ. 11։

³⁷ Տե՛ս նույն տեղը, գ. 695, թ. 21, 23։

³⁸ Տե՛ս նույն տեղը, թ. 23։

³⁹ Տե՛ս նույն տեղը, թ. 21։

⁴⁰ Տե՛ս Ա.-Դո, նշվ. գիրքը, էջ 185։

թ. գյուղում տեղավորվել էին 10 ընտանիք քրդեր⁴¹: 1880 թ. գյուղն ուներ 60 տուն հայ բնակչություն⁴²: Որոշ հեղինակներ ընդունում են 45, 35⁴³, Ա-Դոն՝ 60 տուն հայ բնակչության գոյությունը⁴⁴: Միջին հաշվարկով կունենանք 50 տուն, 350 շունչ հայ բնակչություն:

Կոպալը գավառակի ծայրամասային գյուղերից էր: Այն գտնվում էր Սպիտակ և Գազպեյ լեռների ստորոտներից բխող գետակների միացման տեղում: Գյուղի բնությունը, բարերեր դաշտերը, առևտրական լայն հարաբերությունները գայթակղում էին քոչվորական ցեղերին, որոնք ձգտում էին տիրանալ գյուղին: Քուրդ Յուսուֆ աղային հաջողվեց գյուղը մտցնել իր աշիրաթության մեջ: Արխիվային փաստաթղթերից մեկի հեղինակը վստահեցնում է, որ աղան բարեկամաբար էր տրամադրված հայերի նկատմամբ: Նա իր և ունևոր հայերի միջոցներով գեներ էր գնում, կազմում էր զինյալ խմբեր, որոնք պետք է դիմակայեին ցանկացած ոսոճություն⁴⁵: Այս սովորությունը գալիս էր հնուց: Ենթադրվում էր, որ քրդական այդ ցեղը ունեցել է հայկական ծագում: Որպես ապացույց ասածի, հեղինակը հայտնում է, որ քրդերը հայ քահանային հրավիրում էին «քրիստոնեական ծեսով գերեզման օրհնելու»⁴⁶:

Գյուղի բնակչության քանակի մասին արխիվային փաստաթղթերից մեկը հայտնում է, որ գյուղը ունեցել է 65 տուն հայ, 20 տուն թուրք բնակչություն⁴⁷: Երկրորդը վկայում է 59 տուն, 646 շունչ հայ և 2 տուն թուրք բնակչության մասին⁴⁸: Մի շարք վիճակագիրներ հայ տների քանակն ընդունում են 37, 56, 59⁴⁹: Ա-Դոն տեղեկացնում է, որ գյուղում ապրում էր 65 տուն հայ, 25 տուն քուրդ բնակչություն⁵⁰: Միջին հաշվարկով կունենանք 57 տուն, 476 շունչ հայ բնակչություն:

Խաչալույս (Խալիլ չաուշ, Խալչավուշ) գյուղը իր բարեկեցության ու գեղեցկության համար անվանվել է «հավերժադալար մարգագետինների» երկիր⁵¹: Բացի անասնապահությունից ու երկրագործությունից, գյուղում տարածված էին գորգագործությունն ու ջուլհակությունը:

Գյուղում գործում էին ս. Սարգիս Զորավոր եկեղեցին ու վարժարանը:

1885 թ. վկայում է վիճակագիրներից մեկը, գյուղն ուներ 50 տուն հայ բնակչություն⁵²: Մեկ այլ փաստաթուղթ հաղորդում է, որ 1894 թ. գյուղն ունեցել է 50-60 տուն հայ բնակչություն⁵³: 48 տուն՝ 563 հայ բնակչությամբ և 18 տուն քուրդ բնակչության մասին է վկայում մեկ այլ փաստաթուղթ⁵⁴: Հաջորդ փաստաթուղթը հայտնում է, որ գյուղում ապրում էին 87 տուն հայեր, որոնցից 242-ը տղամարդիկ էին, 254-ը՝ կանայք⁵⁵: Կա նաև 85 տուն հայ, 15 տուն քուրդ բնակչության մասին վկայություն⁵⁶: Միջին հաշվարկով կունենանք՝ 66 տուն, 485 շունչ հայ բնակչություն:

Խոըթ գյուղը գտնվում էր Սպիտակ սարի լանջին, այն վայրում, որտեղից «Խնուսի Նեղոս» կոչվող գետը դուրս էր գալիս երկրի երես: Այն շեյխ Մուրադի աշիրաթության կազմում էր: 1885 թ. ունեցել է 45 տուն հայ բնակչություն, 1908 թ.՝ 22 տուն⁵⁷: Հաջորդ փաստաթուղթը հայտնում է 22 տուն (397) և 19 տուն քուրդ բնակչության մասին⁵⁸:

⁴¹ Տե՛ս ՀՀԳԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 247, թ. 12:

⁴² Տե՛ս նույն տեղը:

⁴³ Տե՛ս նույն տեղը, գ. 695, թ. 22:

⁴⁴ Տե՛ս Ա-Դոն, նշվ. գիրքը, էջ 185:

⁴⁵ Տե՛ս ՀՀԳԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 232, թ. 91:

⁴⁶ Տե՛ս նույն տեղը:

⁴⁷ Տե՛ս նույն տեղը, գ. 695, թ. 23:

⁴⁸ Տե՛ս նույն տեղը, թ. 21:

⁴⁹ Տե՛ս նույն տեղը:

⁵⁰ Տե՛ս Ա-Դոն, նշվ. գիրքը, էջ 185:

⁵¹ Տե՛ս ՀՀԳԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 685, թ. 16:

⁵² Տե՛ս նույն տեղը, գ. 695, թ. 22:

⁵³ Տե՛ս նույն տեղը, թ. 19:

⁵⁴ Տե՛ս նույն տեղը, թ. 20:

⁵⁵ Տե՛ս նույն տեղը:

⁵⁶ Տե՛ս նույն տեղը, թ. 16, 57:

⁵⁷ Տե՛ս նույն տեղը, թ. 22:

⁵⁸ Տե՛ս նույն տեղը, թ. 21:

Կարինի առաջնորդարանը տեղեկացնում է 40 տուն հայ և 30 տուն քուրդ բնակչության մասին⁵⁹։ Միջին հաշվարկով կունենանք 32 տուն, 347 շունչ հայ բնակչություն։

Ց ՈՒ Ց Ա Կ

Խնուսի գավառակի հայաշատ գյուղերի
(հաշվարկը կատարված է միջին տարբերակով)

	տուն	շունչ
Կարաչորան	165	1183
Չեվիրմի	134	940
Հարամիկ	116	812
Արոս	104	783
Կարաքյուվիլլու	107	752
Գովանդուկ	82	668
Խոզլու	105	609
Ելփիս	61	480
Խաչալույս	61	462
Կոպալ	56	436
Քաղքիկ	104	452
Տուման	47	326
Ենիքեոյ	35	291
Խոըթ	37	249

Գավառակի նշանավոր գյուղերից էին Մժնկերտը, Մարուֆը, Խըմիսյան, Սարլուն, Սարվորին և այլն։

Գավառակի կենտրոնը Խնուս գյուղաքաղաքն էր։ Այվանդության համաձայն, քաղաքը կառուցվել է Հայկի և Բելի ճակատամարտի վայրում⁶⁰։ Հնագույն ժամանակներից Խնուսը եղել է վարածուցից գավառի կենտրոնը։ Գտնվելով Խոյ-Վան-Բերկրի-Մանազկերտ-Բաբերդ-Կարին-Տրապիզոն առևտրական ճանապարհի վրա՝ Խնուսը 19-20-րդ դարերում ևս պահպանում էր կարևոր առևտրական կենտրոնի իր դիրքը։

Գյուղաքաղաքը կառուցված է Բյուրակնյա լեռների գառիթափ լեռնալանջին, ծովի մակերևույթից բարձր է 1800 մ։ Տները գտնվում են Խնուս գետի աջ և ձախ մասերում։ Քաղաքը հայտնի էր արհեստավորներով, որոնցից առավել նշանավոր էին դարբինները, ոսկերիչները, դերձակները, պայտարները։ Քաղաքի երկու հատվածներն իրար կապող երկու կամուրջներից մեկը փայտաշեն էր, մյուսը՝ քարաշեն։ Քաղաքի մոտ պեղումների ժամանակ հայտնաբերվել է մի հսկայական կենդանու կմախք, որը «Հայկական փիղ» անվամբ գտնվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում։

Խնուս գետի աջ ափին կառուցված է բերդը։ Այն ունի քառակուսի հատակագիծ։ Ամրակուտ պարիսպն ու մոտակա ժայռերը բերդին հաղորդում են անառիկություն։ Բերդի միակ դուռը գտնվում է հյուսիսային կողմում։ Դեպի ձորն իջնող գաղտնուղին բերդը կապում է արտաքին աշխարհի հետ։

Քաղաքում գործում էր «Միացյալ» ընկերությունը, որը զբաղվում էր կրթական, մշակութային գործունեությամբ։ Նրա միջոցներով էր կառուցվել ս. Աստվածածին եկեղեցին, որը կամարակապ, քարաշեն կառույց էր։ Այն գավառակի նշանավոր հուշարձաններից էր։

Բնակչության թվի մասին կան հետևյալ տեղեկությունները. 1830-1850 թթ. քաղաքն ունեցել է 6000 բնակչություն, որից 3000-ը հայեր էին⁶¹։ 1885 թ. քաղաքում հաշվում էր 180 տուն հայ բնակչություն, 1903 թ.՝ 160⁶²։ Կարինի առաջնորդարանի վիճակագրու-

⁵⁹ Տե՛ս Ա. Դ. Բ. Եզ. գիրքը, էջ 185։

⁶⁰ Տե՛ս Ս. Մոցիկյան, Արևմտահայ աշխարհ, Նյու Յորք, 1947, էջ 279։

⁶¹ Տե՛ս ՏԲ, հ. 2, էջ 754։

⁶² Տե՛ս ՀՀՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 595, թ. 21։

թյամբ քաղաքում ապրում էին 325 տուն հայ և 600 տուն քուրդ բնակչություն⁶⁴։ Հեղինակներից մեկն էլ հայտնում է, որ 1914 թ. պատերազմից առաջ քաղաքն ուներ 8000 բնակիչ, որից 2000-ը հայեր էին⁶⁵։ Փաստաթղթերից մեկն էլ հայտնում է, որ 19-րդ դարի վերջին քաղաքն ուներ 160 տուն հայ և 127 տուն քուրդ բնակչություն⁶⁶։ Միջին հաշվարկով կունենանք 221 տուն, 1631 շունչ հայ բնակչություն։

Արխիվային փաստաթղթերը, տարբեր հեղինակների, այդ թվում նաև՝ թուրքամետ, հաղորդումները վկայում են, որ Խնուսի գավառակի հայությունը, իր վրա կրելով զանազան քոչվորական ասպատակությունների ու արշավանքների ծանր բեռը, մինչև 19-րդ դարի 90-ական թվականները պահպանել էր իր հայ բնակչության հիմնական հատվածը։ Պետական քաղաքականություն դարձնելով հպատակ քրիստոնյաներին ձուլելու, ոչնչացնելու գործելակերպը՝ սուլթան Համիդի արյունոտ վարչակարգին հաջողվեց կոտորածների ու հալածանքների ճանապարհով իրականացնել օսմանիզմի ծրագիրը։ Արևմտյան Հայաստանը հայաթափվեց, զրկվեց իր բնիկ ժողովրդից, նրա տեղը զբաղեցրին կիսավայրենի քրդերն ու Հյուսիսային Կովկասից ներգաղթած մահմեդականները։

Օ. Գ. ЗАТИКЯН — Уезд Хнус Каринской губернии. - Хнус являлся одним из исторических уездов Барцр Айка. По территории он соответствовал древнейшим уездам Хнус, Арк, Варажнуник вместе с Хнусской долиной и горами Бюракна. Во II веке Арташес Первый присоединил Хнусский уезд к Мец Айку. После падения Аршакидов в IV веке и раздела Армении между Римской империей и Персией Хнус присоединился к Римской империи. В 1639 г. по Диарбекирскому договору Хнусский уезд перешел во владение Османской империи.

В XVIII-XIX веках Хнус составил часть Байазедской и Каринской губерний.

В статье автор представляет историческое прошлое уезда, а также его политическую, экономическую, культурную жизнь и национальный состав, уточняет количество армянского населения, дает оценку националистической политике Османской империи и ее влиянию на понижение количества армянского населения.

⁶⁴ Տե՛ս Ա.Ռ.Ն, Աշխ. գիրքը, էջ 185։

⁶⁵ Տե՛ս ՏԲ, հ. 2, էջ 754։

⁶⁶ Տե՛ս ՀՀՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1 գ. 695, թ. 23։